ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-N7

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

23. 05. 2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին գիտախորհրդի բոլոր անդամները:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. 2019-20 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ. Գ. Ավետիսյան/:
2. 2019-2020 ուստարվա I-III կուրսերի քննաշրջանի կազմակերպում /Զեկ. Գ. Ավետիսյան/:

1. Լսեցին- Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին: /Զեկ. Գ. Ավետիսյան/

Գ. Ավետիսայնը նշեց, որ 2019-20 ուստարվա ավարտական կուրսերի քննաշրջանը, պայմանավորված երկրում տիրող արտակարգ իրավիճակով, հետաձգվեց ս/թ ապրիլի 14-25: Քննաշրջանին մասնակցեցին Տնտեսագիտության ԿԾ՝ 24 և Սերվիս ԿԾ 12 ուսանող: Անբավարար գնահատական են ստացել տնտեսագիտություն մասնագիտության 7 ուսանող: Նրանք կարողացան վերահանձնել առաջին լուծարքային շրջանում: Տնտեսագիտություն ԿԾ ուսանողները քննություն հանձնեցին 5 դասընթացի /2 կամընտրական/ շրջանակներում, իսկ Սերվիս ԿԾ ուսանողները՝ 3: Քննաշրջանը կազմակերպվեց հեռավար

տարբերակով/Zoom հարթակի միջոցով/ ամբիոններում սահմանված ընթացակարգի համաձայն՝ հանրագումարային 20 միավորը ձևավորելով երկու բաղադրիչի միջոցով: Ինքնուրույն աշխատանքների /դասապրոցեսի ընթացքում հանձնարարված առաջադրանքներ/ և բանավոր հարցման միջոցով: Տոմսերը ստուգվել և հաստատվել են ամբիոնի վարիչի կողմից: Չնայած այն փաստին, որ քննությունները իրականացվել են ZOOM հարթակի միջոցով, պետք է նշել, որ այն եղել է պատշաճ կազմակերպված և գտնվել է ամբիոնի, դեկանատի և ուսումնամեթոդական վարչության մշտական ուշադրության կենտրոնում: Քննությունների մեծ մասը տեսաձայնագրվել է՝ հետագա խնդիրներից խուսափելու նպատակով: Զեկուցողը ընդգծեց, որ չնայած նոր իրավիճակին ուսանողները ցուցաբերեցին պատրաստվածության բարձր մակարդակ:

Արտահայտվեցին.- Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ամբիոնների և դեկանի հետևողական համատեղ աշխատանքների արդյունքում որևէ խոչընդոտ չստեղծվեց:

Որոշեցին.- Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքները ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին-2019-2020 ուստարվա I-III կուրսերի քննաշրջանի կազմակերպման մասին /Զեկ. Գ. Ավետիսյան/:***

Գ. Ավետիսյանը նշեց, որ I-III կուրսերի համար ընթացիկ քննություններ չեն կազմակերպվելու և դասընթացների գնահատումը իրականացվելու է հանրագումարային 20 միավոր սանդղակով: I-III կուրսերի քննաշրջանը ևս նախատեսվում է կազմակերպել հեռավար տարբերակով /Zoom հարթակի միջոցով/ ամբիոններում սահմանված ընթացակարգի համաձայն՝ հանրագումարային 20 միավորը ձևավորելով երկու բաղադրիչի միջոցով. ինքնուրույն աշխատանքների /դասապրոցեսի ընթացքում հանձնարարված առաջադրանքներ/ և բանավոր/գրավոր/ հարցման միջոցով: Յուրաքանչյուր դասախոս համապատասխան ամբիոն է

ներկայացրել դասընթացի ըստ սահմանված վերջնարդյունքների գնահատման ձևը և բաղադրիչները: Տոմսերի պատշաճ մակարդակով և ժամանակին կազմման գործընթացները կվերահսկվեն ամբիոնների կողմից: Քանի որ 2019-20 ուստարվա երկրորդ կիսամյակում ֆակուլտետում I-III կուրսերի քննաշրջանի կազմակերպումը շեղվելու է գործող կրթական ծրագրերով արդեն իսկ հաստատված կարգից, այդ իսկ պատճառով ամբիոնները ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն են ներկայացրել մասնագիտական դասընթացները ըստ սահմանված վերջնարդյունքների գնահատման ձևերի/գնահատման ձևերը կցվում են ըստ ամբիոների/:

Որոշեցին.-Հաստատել «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Տուրիզմի կառավարման և մշակութաբանություն» ամբիոնների կողմից ներկայացված մասնագիտական դասընթացների գնահատման ձևերը:

Նախագահ՝ *Գ. Ավետիսյան*
Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*